ՄԻԱՄՆԱԿԱՆ ՔՆՆՈՒԹՅՈՒՆ

2015

ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹՅՈՒՆ

ԹԵՍՏ 1

Խմբի համարը

Նստարանի համարը

Հարգելի՛ դիմորդ

Խորհուրդ ենք տալիս առաջադրանքները կատարել ըստ հերթականության: Ուշադիր կարդացե՛ք յուրաքանչյուր առաջադրանքի պահանջը և պատասխանների առաջարկվող տարբերակները: Եթե Ձեզ չի հաջողվում որևէ առաջադրանքի անմիջապես պատասխանել, ժամանակը խնայելու նպատակով կարող եք այն բաց թողնել և դրան անդրադառնալ ավելի ուշ:

Ձեր առջև դրված թեստ-գրքույկի էջերի դատարկ մասերը ազատորեն կարող եք օգտագործել սևագրության համար: ***Թեստ-գրքույկը չի ստուգվում: Ստուգվում է միայն պատասխանների ձևաթուղթը:***

Առաջադրանքները կատարելուց հետո չմոռանաք պատասխանները ուշադիր և խնամքով նշել պատասխանների ձևաթղթում: Պատասխանների ձևաթղթի ճիշտ լրացումից է կախված Ձեր քննական միավորը:

Ցանկանում ենք հաջողություն:

Ա մակարդակ

1	**Նկարում ո՞ր տառով է պատկերված հարավային բևեռային շրջագիծը.**

1) Զ
2) Թ
3) Դ
4) Ե



2	**Եթե քարտեզի թվային մասշտաբը 1 : 2 500 000 է, ապա դրա անվանական մասշտաբը կլինի.**

1) 1 սմ–ում՝ 2,5 կմ
2) 1 սմ–ում՝ 250 կմ
3) 1 սմ–ում՝ 250 մ
4) 1 սմ–ում՝ 25 կմ

3	**Երկու կետերի հեռավորությունը քարտեզում 16 սմ է, իսկ քարտեզի մասշտաբը՝ 1 : 2 400 000: Կետերի միջև իրական հեռավորությունը կլինի.**

1) 3840 կմ
2) 15 կմ
3) 150 կմ
4) 384 կմ

4	**Ո՞ր պնդումն է ճիշտ.**

1) Բևեռային շառավիղը մեծ է հասարակածային շառավղից:
2) Գլոբուսի վրա բոլոր միջօրեականներն իրար հավասար են:
3) Հս. լ. 66° 30′ զուգահեռականի վրա գիշերահավասարի երևույթը տարվա մեջ նկատվում է մեկ անգամ՝ դեկտեմբերի 22–ին:
4) Տվյալ պահին նույն միջօրեականի վրա գտնվող վայրերում, կախված դրանց աշխարհագրական լայնությունից, գրանցվում են տարբեր տեղական ժամանակներ:

5 **Բացարձակ խոնավության հարաբերությունը խոնավության այն քանակին, որն անհրաժեշտ է տվյալ ջերմաստիճանի օդը հագեցնելու համար, կոչվում է.**

1) նվազագույն խոնավություն
2) առավելագույն խոնավություն
3) հարաբերական խոնավություն
4) միջին խոնավություն

6 **Այն օդային զանգվածները, որոնք ձևավորվում են 20^0– 40^0 աշխարհագրական լայնություններում և բնորոշվում են բարձր ջերմությամբ, չորությամբ և փոքր թափանցիկությամբ (մեծ փոշոտվածության պատճառով), կոչվում են.**

1) արկտիկական (անտարկտիկական) օդային զանգվածներ
2) բարեխառն օդային զանգվածներ
3) հասարակածային օդային զանգվածներ
4) արևադարձային օդային զանգվածներ

7 **Արեգակից ստացվող ջերմության քանակը կախված է.**

1) գերիշխող քամիներից
2) տվյալ վայրի բուսապատվածության աստիճանից
3) տվյալ վայրի բացարձակ բարձրությունից
4) օվկիանոսներից և ծովերից տվյալ վայրի ունեցած հեռավորությունից

8 **Օդի բացարձակ խոնավությունը 18 գ/մ³ է: Տվյալ ջերմաստիճանում օդը հագեցնելու համար անհրաժեշտ է 30 գ/մ³ խոնավություն: Օդի հարաբերական խոնավությունը կլինի.**

1) 70 %
2) 40 %
3) 50 %
4) 60 %

9 **Ո՞ր մայրցամաքի ռելիեֆի կտրվածքն է պատկերված արևմուտքից արևելք ուղղությամբ.**



1) Հարավային Ամերիկա
2) Աֆրիկա
3) Ավստրալիա
4) Անտարկտիդա

10 **Կլիմագրամի միջոցով որոշել, թե որ սեզոնին են դիտվում օդի ամենաբարձր միջին ամսական ջերմաստիճանները հյուսիսային կիսագնդի Գ բնակավայրում.**

1) ձմռանը
2) գարնանը
3) ամռանը
4) աշնանը



11 **«Գետ — ծոց» զույգերից ընտրել ճիշտը.**

1) Զամբեզի — Գվինեական
2) Միսիսիպի — Հուդզոնի
3) Գանգես — Բենգալական
4) Ինդոս — Պարսից

12 **Ո՞ր բնական զոնային բնորոշ բուսատեսակներ են շոկոլադի (կակաոյի) ծառը, կաուչուկատու հևեան, հսկա ֆիկուսը.**

1) բարեխառն գոտու լայնատերև անտառների
2) մերձարևադարձային մշտադալար անտառների և թփուտների
3) սավաննաների և նոսր անտառների
4) հասարակածային խոնավ մշտադալար անտառների

13 **Բնութագրումով որոշել կղզին.**

Կղզու գրեթե կենտրոնով անցնում է հասարակածը: Այն Մալակկայի նեղուցով բաժանվում է Մալակկա թերակղզուց: Ո՞ր կղզին է.

1) Սուլավեսի
2) Կալիմանտան
3) Սումատրա
4) Ճավա

14 **Ո՞ր պնդումն է ճիշտ.**

1) Երկրագնդի վրա առանձնացնում են մթնոլորտային ցածր ճնշման չորս և բարձր ճնշման երեք գոտի:
2) Մթնոլորտային ճնշման գոտիների դիրքն ամբողջ տարվա ընթացքում անփոփոխ է:
3) Հասարակածային շրջաններում մթնոլորտային ճնշումը միշտ բարձր է:
4) Մթնոլորտային բարձր ճնշման գոտիներում տեղումները սակավ են, ցածր ճնշման գոտիներում՝ առատ:

15 **Ո՞ր պնդումն է ճիշտ.**

1) Լոնդոնը առաջին ժամային գոտում է:
2) Դեկտեմբերի 22–ի կեսօրին Արեգակի ճառագայթներն ուղղահայաց ընկնում են հվ. լ. 23° 30′–ի վրա:
3) Երկրագունդը միջօրեականներով բաժանված է 15 ժամային գոտիների:
4) Դեկտեմբերի 22–ը ձմեռային գիշերահավասարի օրն է:

16 **«Գետ — աշխարհամաս» զույգերից ընտրել ճիշտը.**

1) Ռիոն — Ասիա
2) Հռենոս — Ասիա
3) Պո — Աֆրիկա
4) Լուար — Ամերիկա

17 **Նիագարա գետով իրար կապված լճեր են.**

1) Միչիգանը և Հուրոնը
2) Էրին և Օնտարիոն
3) Հուրոնը և Էրին
4) Օնտարիոն և Հուրոնը

18 **«Հարթավայր — դրա տարածքով հոսող գետ» զույգերից ո՞րն է ճիշտը.**

1) Մեծ հարթավայրեր — Սուրբ Լավրենտիոս
2) Մերձատլանտյան դաշտավայր — Մակենզի
3) Մերձմեքսիկական դաշտավայր — Միսիսիպի
4) Կենտրոնական հարթավայր — Յուկոն

19 **Ո՞ր լեռներն են քարտեզում նշված Գ տառով.**

1) Հինդուկուշի
2) Էլբուրսի
3) Տյան Շանի
4) Կովկասի



20 **Ո՞ր մայրաքաղաքն է քարտեզում նշված Է տառով.**

1) Դելի
2) Սեուլ
3) Տոկիո
4) Փեկին

21 **Ո՞ր պնդումն է ճիշտ.**

1) Միգրացիայի պատճառ կարող է դառնալ բնական և տեխնածին աղետների հետևանքով էկոլոգիական իրավիճակի վատթարացումը:
2) Երկրի բնակչության թվաքանակը փոխվում է ներքին միգրացիայի շնորհիվ:
3) Ներկայումս արտաքին միգրացիայի հիմնական պատճառը կրոնականն է:
4) Միգրացիայի ինտենսիվությունը առավել բարձր է ծերերի և կանանց շրջանում:

22 **Հասարակության զարգացման մեջ քաղաքների դերի մեծացման պատմական գործընթացը, որն արտահայտվում է բնակչության ընդհանուր թվում քաղաքային բնակչության տեսակարար կշռի ավելացմամբ և քաղաքային ապրելակերպի տարածմամբ, կոչվում է.**

1) դեպոպուլյացիա
2) ուրբանիզացիա
3) ագլոմերացիա
4) միգրացիա

23 **Բնութագրումով որոշել երկիրը.**

Տարածքի մեծությամբ և բնակչության թվով Եվրոպայում խոշոր երկրներից է: Հարուստ է քարածխի և երկաթաքարի պաշարներով: Բնակչությունը բնութագրվում է ցածր բնական աճով: Բնակչության թվով երկրորդ ազգը ռուսներն են: Երկրի տնտեսության զարգացման համար կարևոր նշանակություն ունի Սև ծովի ափին տեղակայված լինելը: Ո՞րն է այդ երկիրը.

1) Լեհաստանը
2) Ուկրաինան
3) Բելառուսը
4) Գերմանիան

24 **Երկրի բնակչության թիվը կազմում է 365 600 մարդ, ծնելիության գործակիցը՝ 5 ‰: Ծնվածների բացարձակ թիվը կկազմի.**

1) 2028 մարդ
2) 1828 մարդ
3) 1628 մարդ
4) 1980 մարդ

25 **Ո՞ր պնդումն է *սխալ*.**

1) Բնակչության վերարտադրության երկրորդ տիպի երկրներին բնորոշ է ցածր ծնելիությունը, բարձր մահացությունը և ցածր բնական աճը:
2) Բնակչության վերարտադրության երկրորդ տիպին են պատկանում Ասիայի, Աֆրիկայի և Լատինական Ամերիկայի երկրները:
3) «Ժողովրդագրական ճգնաժամը» բնորոշ է զարգացած երկրներին:
4) Բնակչության ծնելիությունն ու մահացությունը հաշվում են տոկոսով կամ պրոմիլներով:

26 **Ընտրել «պետություն — մայրաքաղաք» համապատասխանության ճիշտ շարքը.**

1) Սիրիա
2) Հորդանան
3) Արաբական Միացյալ Էմիրություններ
4) Օման

ա. Աբու Դաբի
բ. Մասկատ
գ. Դամասկոս
դ. Ամման

1) 1–դ, 2–բ, 3–ա, 4–գ
2) 1–բ, 2–ա, 3–դ, 4–գ
3) 1–գ, 2–դ, 3–ա, 4–բ
4) 1–ա, 2–գ, 3–բ, 4–դ

27 **«Արտադրանք — արդյունաբերության ճյուղ» զույգերից ընտրել ճիշտը.**

1) սինթետիկ մանրաթել — թեթև արդյունաբերություն
2) հաստոց —մետաղաձուլություն
3) պլաստմասսա — մեքենաշինություն
4) տրիկոտաժ — թեթև արդյունաբերություն

28 **Արևելյան Եվրոպա տարածաշրջանի վերաբերյալ ո՞ր պնդումն է ճիշտ.**

1) Էլեկտրաէներգետիկայի գերակշիռ մասը տալիս են ջրային էլեկտրակայանները:
2) Երկրներին բնորոշ է բնակչության վերարտադրության երկրորդ տիպը:
3) Տարածաշրջանում մեծ թիվ են կազմում սլավոնական ժողովուրդները:
4) Երկրների մեծ մասի տնտեսությունը հետարդյունաբերական զարգացման փուլում է:

29 **Բնակչության բացարձակ թվի նվազումը (ապաբնակեցումը) առավելապես բնորոշ է.**

1) Թուրքմենստանին և Ուզբեկստանին
2) Ղազախստանին և Իրանին
3) Ավստրալիային և Ճապոնիային
4) Ռուսաստանին և Ուկրաինային

30 **Մեռատարիքային բուրգը բնորոշ է.**

1) Հնդկաստանին
2) Ֆրանսիային
3) ԱՄՆ–ին
4) Բելգիային



31 **Ո՞ր պնդումն է ճիշտ.**

1) Մեքենաշինության նյութատար ճյուղեր են ռադիոէլեկտրոնիկան, ճշգրիտ մեքենաների արտադրությունը:
2) Զարգացող երկրներում զարգացած են մեքենաշինության գիտատար ճյուղերը:
3) Զարգացած երկրների մեքենաշինության առաջատար ճյուղը գյուղատնտեսական մեքենաշինությունն է:
4) ԱՄՆ–ի Կալիֆոռնիա նահանգում տեղեկատվական տեխնոլոգիական բարդ սարքավորումների արտադրությունները կենտրոնացած են Սթենֆորդի համալսարանի շուրջը:

32 **Ընտրել «մշակաբույս — բուսաբուծության ճյուղ» համապատասխանության ճիշտ շարքը.**

1) ծխախոտ	ա. հացահատիկային
2) գարի	բ. տեխնիկական
3) վարունգ	գ. այգեգործություն
4) խնձոր	դ. բանջարաբոստանային

1) 1–բ, 2–ա, 3–դ, 4–գ
2) 1–բ, 2–գ, 3–ա, 4–դ
3) 1–ա, 2–գ, 3–դ, 4–բ
4) 1–գ, 2–ա, 3–բ, 4–դ

33 **Ո՞ր պնդումն է ճիշտ.**

1) Հայկական լեռնաշխարհի հարավային մասում ձգվում է Հայկական պար լեռնաշղթան:
2) Հայկական լեռնաշխարհի հարավային մասում՝ Միջագետքի հարևանությամբ, ձգվում է Ներքին Տավրոսի լեռնային համակարգը:
3) Հայկական լեռնաշխարհն արևելքից սահմանակցում է Արաբական սարահարթին:
4) Հայկական հրաբխային բարձրավանդակի կենտրոնական մասում վեր են խոյանում Արագած ու Գեղամա լեռնազանգվածները:

34 **ՀՀ արդյունաբերության վերաբերյալ ո՞ր պնդումն է ճիշտ.**

1) Ալյումինի արդյունաբերության կենտրոնը Վանաձորն է:
2) ՀՀ մեքենաշինության տեղաբաշխումն ամբողջությամբ համընկնում է գունավոր մետաղաձուլության տեղաբաշխման հետ:
3) ՀՀ էլեկտրակայանների հզորության կառուցվածքում առավել մեծ բաժին ունեն ջէկերը:
4) Քիմիական արդյունաբերության խոշոր կենտրոններ են Արմավիր և Գյումրի քաղաքները:

35 **Սյունիքի մարզը սահմանակից չէ.**

1) Թուրքիային
2) Ադրբեջանին
3) Իրանին
4) Վայոց ձորի մարզին

36 **Ո՞ր ջրանցքն է քարտեզում նշված Գ տառով.**

1) Կոտայքի
2) Լոռու
3) Շիրակի
4) Նալբանդի



37 **Ո՞ր քաղաքն է քարտեզում նշված Է տառով.**

1) Իջևան
2) Սևան
3) Ճամբարակ
4) Դիլիջան

38 **Ո՞ր շարքի բոլոր երկրներն են հարուստ նավթի պաշարներով.**

1) Ռուսաստան, Ադրբեջան, Բելառուս
2) Քուվեյթ, Իրաք, Վենեսուելա
3) Սաուդյան Արաբիա, Իտալիա, Ուկրաինա
4) Իրան, Ճապոնիա, Ինդոնեզիա

39 **Տրվածներից ո՞րը մթնոլորտի աղտոտման բնածին աղբյուր չէ.**

1) հրաբուխը
2) փոշեհողմը
3) ավտոմոբիլային տրանսպորտը
4) անտառային հրդեհը

40 **Մթնոլորտում կախված վիճակում հանդես եկող պինդ և հեղուկ նյութերի մանր փոշենման մասնիկները կոչվում են.**

1) ֆումարոլներ
2) աերոզոլներ
3) պեստիցիդներ
4) ֆենոլներ

41 **Գրել այն լեռնային համակարգերի համարները, որոնք Եվրոպայում են.**

1) Տյան-Շանի լեռներ
2) Մեծ Կովկաս
3) Պիրենեյներ
4) Հիմալայներ
5) Ալթայի լեռներ
6) Սկանդինավյան լեռներ
7) Վերխոյանսկի լեռներ
8) Կարպատներ

42 **Գրել այն երկրների համարները, որտեղ արտադրվող էլեկտրաէներգիայի գերակշիռ մասը բաժին է ընկնում ատոմային էլեկտրակայաններին.**

1) Բրազիլիա
2) Ռուսաստան
3) Թուրքիա
4) Կանադա
5) Չինաստան
6) Իրան
7) Ֆրանսիա
8) Ճապոնիա

43 **Գրել Հայկական լեռնաշխարհի հրաբխային գագաթների համարները.**

1) Ծղուկ
2) Կաչկար (Քաջքար)
3) Սուկավետ
4) Սիփան
5) Նեմրութ
6) Արամազդ
7) Գոմշասար
8) Թեժլեռ

44 **Տրված տրանսպորտի տեսակները դասավորել համաշխարհային բեռնաշրջա–նառության կառուցվածքում ունեցած կշռի նվազման կարգով.**

1) ծովային
2) խողովակաշարային
3) ավտոմոբիլային
4) երկաթուղային

45 **ՀՀ գյուղական բնակավայրերի վերաբերյալ տրված պնդումներից որո՞նք են ճիշտ, որո՞նք՝ սխալ.**

1) Սյունիքի և Լոռու մարզերում գյուղական բնակչության տեսակարար կշիռը բարձր է:
2) Բարձրլեռնային գոտու գյուղական բնակավայրերի ցանցը նոսրացել է:
3) Գյուղական բնակավայրերի միջին մարդաշատությունը մեծացել է:
4) Սյունիքի և Արագածոտնի մարզերում տիրապետողը գյուղական համատարած տարաբնակեցումն է:
5) Ամենաբարձրադիր գյուղը Վերին Շորժան է՝ Գեղարքունիքի մարզում:
6) Արմավիրի և Արարատի մարզերում գյուղական բնակչության տեսակարար կշիռը ցածր է:

Բ մակարդակ

46 **Երևան (արլ. ե. 44° 30′) և Իրկուտսկ (արլ. ե. 105°) քաղաքների գոտիական ժամանակների տարբերությունը կլինի.**

1) 4 ժամ
2) 1 ժամ
3) 2 ժամ
4) 3 ժամ

47 **Ո՞ր պնդումն է ճիշտ.**

1) Երկրի մակերևույթի բոլոր անհարթությունների ամբողջությունը կոչվում է ռելիեֆ:
2) Զուգահեռականները հատակագծի կամ քարտեզի՝ տեղանքի հավասար բացարձակ բարձրություն ունեցող կետերը միացնող գծերն են:
3) Բացարձակ բարձրությունը ցույց է տալիս, թե Երկրի մակերևույթի որևէ կետ որքանով է բարձր մեկ այլ կետից:
4) Երկրագնդի ամենամեծ բացարձակ խորությունն ունեցող կետը Ատլանտյան օվկիանոսում է:

48 **Ո՞ր շարքի գետերն են հոսում արևմուտքից արևելք ուղղությամբ.**

1) Օբ, Լենա, Վոլգա
2) Ինդոս, Մեկոնգ, Տիգրիս
3) Դնեպր, Իրավադի, Ենիսեյ
4) Դանուբ, Ամուր, Յանցզի

49 **Ո՞ր պնդումն է *սխալ*.**

1) Արևադարձային գոտիներում օդը կատարում է վարընթաց շարժում:
2) Երկրագնդի վրա օդը մշտապես շարժվում է բարձր ճնշման գոտուց դեպի ցածր ճնշման գոտի:
3) Վարընթաց շարժում կատարող օդը հագենում է և առաջացնում առատ տեղումներ:
4) Մթնոլորտային ճնշման գոտիների առաջացման պատճառը Երկրի վրա ջերմության անհավասարաչափ բաշխումն է:

50 **Ո՞րն է բնության բաղադրիչների ճիշտ զուգորդությունը.**

1) տափաստան — մոխրագորշ հող — փետրախոտ, սիզախոտ
2) տայգա — պոդզոլային հող — եղևնի, սոճի
3) տունդրա — կմախքային հող — լորենի, հացենի
4) անապատ — սևահող — օշինդր, ուղտափուշ

51 **«Սահմանակից երկրներ — լեռներ» զուգորդումներից ընտրել ճիշտը.**

1) Լեհաստան — Չեխիա — Ալպեր
2) Ֆրանսիա — Իսպանիա — Պիրենեյներ
3) Ուկրաինա — Ռուսաստան — Կարպատներ
4) Թուրքիա — Իրան — Պոնտական

52 **Ո՞ր պնդումն է ճիշտ.**

1) Ռուսները պատկանում են հնդեվրոպական լեզվաընտանիքի ռոմանական լեզվախմբին:
2) Աշխարհի լեզուները միավորվում են 50 խոշոր լեզվաընտանիքների մեջ:
3) Արևմտյան Եվրոպայի երկրներն աչքի են ընկնում բնակչության բարձր բնական աճով:
4) Նեգրոիդ և եվրոպեոիդ ռասաների խառնածինները կոչվում են մուլատներ:

53 **«Երկիր — նավահանգիստ» զույգերից ընտրել *սխալը*.**

1) Ռուսաստան — Մուրմանսկ
2) Ֆրանսիա — Մարսել
3) Բելգիա — Ռոտերդամ
4) Գերմանիա — Համբուրգ

54 **Հնդկաստանի վերաբերյալ ո՞ր պնդումն է ճիշտ.**

1) Արդյունաբերության առաջատար ճյուղերից է սև մետաղաձուլությունը:
2) Քարածխի պաշարներով աշխարհում առաջինն է:
3) Էլեկտրաէներգիայի գերակշիռ մասը արտադրվում է ջրէկներում:
4) Հանքային հումքի բացակայության պատճառով արդյունաբերության կառուցվածքում բացակայում է քիմիական արդյունաբերությունը:

55 **Բնութագրումով որոշել պետությունը.**

«Մեծ յոթնյակ»–ի անդամ այս պետությունն ըստ պետական կարգի խորհրդարանական հանրապետություն է: Հարուստ է մարմարի ու սնդիկի պաշարներով: Երկրում բարձր է ուրբանիզացման մակարդակը, սակայն ի տարբերություն այլ եվրոպական երկրների՝ այստեղ շատ չեն խոշորագույն քաղաքները: Ո՞րն է այդ երկիրը.

1) Մեծ Բրիտանիան
2) Իտալիան
3) Ֆրանսիան
4) Գերմանիան

56 **ՀՀ լեռնագրության վերաբերյալ ո՞ր պնդումն է ճիշտ.**

1) Ուրծի լեռնաշղթայից սկսվում և դեպի արևելք տարածվում են Բարգուշատի և Զանգեզուրի լեռնաշղթաները:
2) Սևանա լիճը եզրավորված է միայն ծալքաբեկորավոր լեռներով:
3) ՀՀ ամենաբարձր ծալքաբեկորավոր լեռնագագաթը Կապուտջուղն է:
4) Աշոցքի սարահարթում են Ծղուկ և Մեծ Իշխանասար գագաթները:

57 **Տավուշի մարզի հյուսիսի ցածրադիր հովիտներում կլիման.**

1) չոր և խիստ ցամաքային է
2) չոր մերձարևադարձային է
3) բարեխառն լեռնային է
4) չափավոր ցամաքային է

58 **Արարատի մարզում արդյունաբերության ո՞ր ենթաճյուղը զարգացած չէ.**

1) մսի
2) գինու–կոնյակի
3) պահածոների
4) ցեմենտի

59 **Ի՞նչն է ընդհանուր Սյունիքի և Վայոց ձորի մարզերի համար.**

1) Արդյունաբերության մասնագիտացման ճյուղ է գունավոր մետաղաձուլությունը:
2) Արդյունաբերության մասնագիտացման ճյուղերից է հանքային ջրերի արտադրությունը:
3) Գերակշռում են անտառային լանդշաֆտները:
4) Սահմանակից են Նախիջևանի Հանրապետությանը:

60 **Խաղողագործական շրջան չէ.**

1) Շիրակի դաշտը
2) Սյունիքի հարավը
3) Արարատյան դաշտը
4) Արփայի հովիտը

61 **Տրված պետությունները դասավորել բրնձի համախառն բերքի աճման կարգով.**

1) Չինաստան
2) Ինդոնեզիա
3) Հնդկաստան
4) Բանգլադեշ

62 **Գրել այն երկրների համարները, որոնք կառավարման ձևով բացարձակ միապետություններ են.**

1) Սաուդյան Արաբիա
2) Ճապոնիա
3) Իսպանիա
4) Նիդերլանդներ
5) Նորվեգիա
6) Շվեդիա
7) Օման
8) Դանիա

63 **Գրել երկաթաքարի հանքավայրերի համարները.**

1) Աբովյանի (Կապուտան)
2) Քաջարանի
3) Մեղրու (Շվանիձոր)
4) Ալավերդու
5) Քաջարանի
6) Հրազդանի
7) Մեղրաձորի
8) Սվարանցի

64 **Գրել Արևմտյան Եփրատի հովտում ընկած դաշտերի համարները.**

1) Բասենի
2) Կարնո
3) Մշո
4) Ալաշկերտի
5) Շիրակի
6) Արարատյան
7) Երզնկայի
8) Մասրիկի

65 **Երկրի գետային տրանսպորտով տարեկան փոխադրվում է 9 մլն տ բեռ, իսկ բեռնաշրջանառությունը կազմում է 630 մլն տ•կմ: Որքա՞ն է բեռների փոխադրման միջին հեռավորությունը:**

(66-67) Լեռան ստորոտին մթնոլորտային ճնշումը 500 մմ է, իսկ օդի ջերմաստիճանը՝ 25^0: Լեռան գագաթին օդի ջերմաստիճանը $+13^0$ է (հաշվարկը կատարել 6^0–ով).

66	Որոշել լեռան հարաբերական բարձրությունը:

67	Որոշել մթնոլորտային ճնշումը լեռան գագաթին:

(68-69) Երկրի բնակչության թիվը 4 մլն է, բնական աճի գործակիցը՝ 15 ‰: Տարվա ընթացքում ներգաղթը կազմել է 14 000 մարդ, արտագաղթը՝ 6 000 մարդ.

68	Որոշել բնակչության բացարձակ բնական աճը:

69	Որոշել բնակչության մեխանիկական աճը:

70 **Հյուսիսային Ամերիկայի վերաբերյալ տրված պնդումներից որո՞նք են ճիշտ, որո՞նք՝ սխալ.**

1) Մեծ ավազան սարահարթում տարածվում է կիսանապատային լանդշաֆտը:
2) Հյուսիսամերիկյան պլատֆորմի բյուրեղացած հիմքի մերկացած տեղամասերում առաջացել է Կոորդիլիերների լեռնային համակարգը:
3) Ամբողջովին արևելյան կիսագնդում է:
4) Ատլանտյան օվկիանոսի Լաբրադորյան և Խաղաղ օվկիանոսի Կալիֆոռնիական սառը ծովային հոսանքներն առափնյա շրջաններում առաջացնում են կլիմայի չորություն և օդի ջերմաստիճանի նվազում:
5) Հյուսիսային մասի մակերևույթի ձևավորման վրա մեծ ազդեցություն են թողել սառցադաշտերը:
6) Լաբրադոր թերակղզում տունդրայի զոնայի հարավային սահմանը Ալյասկայի համեմատ ձգվում է բավականին հյուսիս: